*Հաստատված է*
*Տնօրինության 16.09.2025թ.-ի*
*Թիվ DEC 12-79 արձանագրությամբ*
*Ուժի մեջ է 17.09.2025թ.-ից*

| **FTN ապահովմամբ քարտային վարկային գիծ** | |
|---|---|
| **Վարկի նպատակը** | Ընթացիկ սպառողական ծախսերի իրականացում |
| **Հաճախորդի տեսակ** | 18-65 տարեկան ռեզիդենտ Ֆիզիկական անձինք |
| **Վարկի արժույթ** | ՀՀ դրամ |
| **Վարկի գումար** | 50,000-5,000,000 ՀՀ դրամ |
| **Ապահովվածություն** | Ֆաստեքս ընկերության կողմից թողարկած ftn թվային ակտիվը |
| **Վարկ/գրավ հարաբերակցություն** | մինչև 75% |
| **Վարկի ժամկետ** | 3 ամիս |
| **Արտոնյալ ժամանակահատված** | 30 օր անտոկոս**, որից հետո օգտագործված գումարի վրա տարեկան 15% |
| **Տարեկան փաստացի տոկոսադրույք** | 10,56% |
| **Տոկոսագումարի հաշվարկ** | օրական |
| **Մարման եղանակ** | Կուտակված տոկոսագումարը և վարկային գծի օգտագործված մասը ամբողջությամբ ենթակա է ամբողջական մարման վարկային գծի ժամկետի վերջում: |
| **Վարկի տրամադրման եղանակ** | Բանկի կողմից թողարկված քարտային հաշվին |
| **Վարկի վաղաժամկետ մարման տույժ** | Առկա չէ |
| **Վարկի տրամադրման միջնորդավճար** | Առկա չէ |
| **Վարկի սպասարկման ամսական վճար** | Առկա չէ |
| **Ժամկետանց մայր գումարի տույժ** | Առկա չէ |
| **Ժամկետանց տոկոսի տույժ** | Առկա չէ |

* թվային ակտիվի գնահատված արժեքը արտահայտված է ՀՀ դրամով, որպես գրավի արժեք հիմք է ընդունվում Ֆաստեքս ընկերության կողմից տրամադրած շուկայական արժեքը

** Վարկային գծի քարտային հաշվին հասանելի լինելուց հետո

! Նախքան պայմանագրի կնքումը Բանկը Ձեզ կտրամադրի FTN ապահովմամբ քարտային վարկային գծի էական պայմանների անհատական թերթիկը, որում ներկայացված են Ձեզ տրամադրվելիք վարկի էական պայմանները:

1. Սույն տեղեկատվական ամփոփագրով սահմանված պայմաններով հաճախորդը միաժամանակ կարող է ունենալ մեկ վարկ:

## Ծանոթություն

1. Վարկի տոկոսները հաշվարկվում են վարկային գծի օգտագործված գումարի վրա: Կուտակված տոկոսագումարը արտացոլվելու է Բանկի մոբայլ հավելվածի վարկեր բաժնում:

2. Վարկը տրամադրվում է անկանխիկ եղանակով՝ Բանկում գործող քարտային հաշվին:

3. Վարկի համար կարող եք դիմել միայն Բանկի մոբայլ հավելվածով:

4. Վարկի տրամադրման դրական որոշման կայացման գործոններն են՝ վարկ/գրավ հարաբերակցության համապատասխանությունը, Բանկում քարտի առկայությունը և անհրաժեշտ չափով ftn ակտիվի առկայություն:
5. Վարկի տրամադրումը կատարվում է նույն օրվա ընթացքում:

6. Վարկի մարման նպատակով մուտքագրված ցանկացած գումար որպես կանոն Բանկի կողմից ուղղվում է մուտքագրման պահին առկա՝ Հաճախորդի կողմից Վարկային պայմանագրի ուժով վճարման ենթակա գումարների, այդ թվում՝ տույժերի, սպասարկման վճարների, տոկոսների, Վարկի գումարի մարմանը: Բանկն իրավունք ունի Հաճախորդի հետ կնքվող պայմանագրում վճարման ենթակա գումարների այլ հերթականություն սահմանել: Բանկին վճարված գումարները ենթակա են վերականգնման պարտադիր վճարման ենթակա (տոկոս, տուգանք, տուժանք) գանձումներից հետո:

7. ՀԱՃԱԽՈՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐԿԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ՄԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՄԱՄԱՍՆՈՐԵՆ ՆՎԱԶԵՑՎՈՒՄ ԵՆ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ, ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՆԱԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ, ԵԹԵ ՎԵՐՋԻՆՍ ՀԱՇՎԵԳՐՎՈՒՄ Է ՕՐԱԿԱՆ ԿՏՐՎԱԾՔՈՎ. ԻՍԿ 3-ՐԴ ԱՆՁԱՆՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՎՃԱՐՆԵՐԸ ԵՆԹԱԿԱ ՉԵՆ ՆՎԱԶԵՑՄԱՆ:

8. Քաղվածքների, դրանց կրկնօրինակների, տեղեկանքների և այլ ծառայությունների տրամադրման պայմանները և սակագները հրապարակված են Բանկի պաշտոնական կայքում՝ www.fastbank.am, ինչպես նաև տեղադրված են Բանկի գործունեության վայրերում:

9. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԲԱՆԿԸ 3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ ԵՎ ԿԲ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՁԵԶ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ:

10. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ, ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՏԵՂԱԴՐՎԱԾ Է ԲԱՆԿԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔՈՒՄ՝ www.fastbank.am:

11. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ԲԱՆԿԻ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ԶԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ և ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ:
12. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ» ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ ԵՎ ՁԵԶ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է:

13. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ:

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ:**